
ՀԵԳԻՆԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ «ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱԿԱԲՈՒՅՑԾՆԵՐԸ» ՇԱՐՔՈՒՄ

ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Երգիծանքի միջոցներից է հեգնանքը:

Հեգնանք բառի համարժեքը՝ իրոնիա տերմինը, ծագում է հունարեն *eironeria* բառից (բառացի՝ ձևացում, կեղծիք) և նշանակում է «քողարկված ծաղր»։ Այն կիրառվում է և մասնագիտական գրականության մեջ՝ որպես տերմին, և առօրյա-խոսակցական լեզվում՝ ոչ տերմինային նշանակությանը։

Հեգնանք բառը տերմինային նշանակությամբ հավասարապես գործածվում է թե՛ ոճագիտության, թե՛ գեղագիտության (նաև գրականագիտության) մեջ, ուստի հարկ է այն սահմանազատել ըստ վերը նշված բնագավառների, այն է՝ հեգնանքը՝ որպես երգիծանքի դրսնորման ձև, և հեգնանքը՝ որպես ոճական-արտահայտչական միջոց։ Հեգնանքը՝ որպես խոսքի արտահայտչական միջոց, «մի արտահայտություն է..., որի մեջ բացասական երևույթը ծաղրվում է ոչ ուղղակի ճանապարհով. գրողը նրան արտաքրուստ ինչ-որ արժանիքներ է վերագրում, կարծեք ուզում է գովաբանել, բայց հասկացվում է ճիշտ հակառակը»¹։ Կամ՝ «...ոճական դարձված, արտահայտություն, բառ, որում ձևականորեն հաստատվում է առարկայի կամ անձի մասին եղած կարծիքի ճիշտ հակառակը»²։ Ըստ եւրեյան, հեգնանքը՝ որպես խոսքի արտահայտչական միջոց, ստեղծվում է բառերի հակառակ իմաստներով գործածվելու միջոցով, այսինքն՝ նրա ձևավորման հիմքում ընկած է հակադրույթը։ Հեգնանքը՝ որպես երգիծանքի դրսնորման ձև, գեղագիտական կարգ է, անցումային ձև հումորից դեպի սատիրա։ Այն անմիջականորեն պայմանավորված է գրողի անհատական խառնվածքով, հոգեկերտվածքով, աշխարհընկալումով, նպատակադրումով և այլն։ Եվ որպես գեղագիտական կարգ՝ այն անհրաժեշտ է տարբերակել նույնանուն ոճական-արտահայտչական միջոցից։ Կախված լինելով գրողի անհատական աշխարհընկալումից և վերոնշյալ նյոււ հատկանիշներից՝ հեգնանքը՝ որպես երգիծանքի դրսնորման ձև, արտահայտվում է լեզվառնական բոլոր միջոցներով։

Հոդվածում անդրադարձել ենք հեգնանքի՝ որպես երգիծանքի հիմնական ձևերից մեկի դրսնորման լեզվառնական այն միջոցներին, որոնք առավել չափով են նպաստել հերոսների կերպավորմանը երվանդ Օտյանի «Հեղափոխության մակաբույժները» շարքում։ Նպատակահարմար չենք գտել

¹ Էղ. Զրբաշյան, Գրականության տեսություն, Եր., 1972, էջ 253:

² "Словарь русского языка в четырех томах". Т. I. M., 1957, с. 933.

հեգնանքի արտահայտության ոճական միջոցները քննել ըստ լեզվական մակարդակների՝ հնչյունական, բառային, քերականական: Քննության այդ եղանակը թեև հնարավորություն է տալիս առավել մանրամասն ծանոթանալու ոճական միջոցներից յուրաքանչյուրի կիրառական յուրահատկություններին, մյուս կողմից, սակայն, խանգարում է պատկերի ամբողջական ընկալմանը, թուլացնում համատեքստի բովանդակության գնահատման հնարավորությունները, քանի որ համատեքստում ոճական մի քանի միջոցների համատեղ գործածությամբ գրողը անբողջացնում է պատկերը:

«Հեղափոխության մակարույժները» շարքը (յոթ պատմվածք կամ նորավեպ) Օտյանը գրել է իր ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանում (1896-1908), որը համընկնում է քաղաքական բախումների և արևմտահայ հատվածում ծայր առաջ առաջ հեղափոխական-ազատագրական շարժումների ժամանակաշրջանին: Ժողովրդի ճակատագրի վճռական պահերին գտնվեցին այնպիսի «հայրենանվեր հերոսներ», «որոնց համար հեղափոխությունը ոչ թե նվիրական գաղափար էր, այլ ապրուստի միջոց: ...Հայ գաղթօջախները լցվել էին ինքնակոչ «հերոսներով», որոնք իրականում ժողովրդի խանդավառությունը շահագործող խարեւաներ էին»³: 1898-1899 թթ. «Նոր կյանքում» տպագրելով այս պատմվածաշարը՝ Օտյանը դիմակազերծում է հեղափոխական շարժման ընթացքում գլուխ բարձրացրած կեղծ կուսակցականներին, ազգային շինուու «հերոսներին»: Հեղինակն ինքն իր ստեղծագործությունների մեջ առանձնացրել է այս շարքը, այն համարել գեղարվեստական տեսակետից հաջողված գործ (վիպակ): «Այո՛, հաջողվածներ ալ կան վեպերուս մեջ,- մի առիթով ասել է նա Յ. Սիրունուն: - Նախ հիշեմ «Հեղափոխության մակարույժները»... Հաջող է այս վիպակը, որովհետև ան իրական կյանքն է իրական տիպերով»⁴:

Շարքի կերպարները իրական մարդիկ են իրական միջավայրում, այսինքն՝ հերոսներն իրականության մեջ ունեն իրենց նախատիպերը, և տարիներ հետո Օտյանն իր հուշագրություններում («Տասներկու տարի Պոլսեն դուրս», «Անիջյալ տարիներ») պատմում է այդ նախատիպերի մասին⁵: Չանդրադարնալով կերպարների նախատիպերի քննության հարցին՝ նշենք, որ շարքի հերոսներն ընդհանրանում են իրենց ներքին և արտաքին էլությամբ, գործելու նպատակներով: Նրանք բոլորը «հայրենասիրության ծերնածուներ», «կեղծ փրկիչներ» են, որոնց համար հանուն հայրենիքի փրկության դրամ հավաքելը, բայց «կեղրոնական սնտուլկին» ուղարկելու փոխարեն այն գրապանելը «սրբազն նպատակ» է: Այս հերոսներին և նրանց միջավայրը երգիծաբանը գեղարվեստորեն ներկայացնում է հիմնականում հեգնանքի միջոցով:

Օտյանը բնավ էլ դեմ չէր հեղափոխական-ազատագրական շարժմանը և նրա առաջատար հերոսների գործունեությանը: Նա ընդգծված ակնածանքով է խոսում ճշմարիտ հեղափոխականների, ազգային հերոսների

³ Ռ. Էլոյան, Երվանդ Օտյանի քաղաքական երգիծանքը, Եր., 1999, էջ 35:

⁴ «Սովետական գրականություն», Եր., 1969, № 12, էջ 128:

⁵ Այս մասին մանրամասն տես՝ Ս. Մուրադյան, Երվանդ Օտյան: Կյանքը և գործը, Եր., 1996, էջ 123-142:

մասին: «Հրացանը ուսը զարկած, մեջքը ատրճանակ ու դաշույն, կայտառ մարդ մը, պեխերը մինչև ականջն ի վեր, վառ աչքեր, խիզախ, աներկյուղ կերպարանքով, որուն տեսքը հոյս մըն է իրեններուն ու սարսափ՝ թշնամիներուն համար: ...Ամիկա չի՛ բռնվիր, չի՛ բանտարկվիր, չի՛ նախատվիր, չի՛ ծեծվիր, չի՛ մեռնիր... Ահա ինչպես կ'երևակայեմ Յերոսը: Ու եղած են այսպեսները մեր վերջին տարիներու թախծագին պատմության մեջ»⁶: Օսյանը դեմ է այն հեղափոխականին, որը, ժողովողի փրկությանը ծառայելու անվան տակ օգտագործելով պատեհ առիթը, «հեղափոխականի գույն մը տալով իր խոսքերին, մորուքին ու գավազանին» (407), ասպարեզ էր նետվել՝ անձնական կարիքները հոգալու: «Բայց մենք,- գրուն է Օսյանն իր հրատարակած երգիծաթերթի՝ «Ազատ խոսքի» որդեգրած ուղղության վերաբերյալ,- մեր գոհացունը պիտի փնտռենք ծաղրելով կամ ձաղկելով ... կեղծ փրկիչները, սուտին ճարտարապետները, գողցված համբավները, անշարժ պոչտողները, հաշվող խանդավառները, անկեղծության աճպարարները, հայրենասիրության ձեռնածումերը» (553-554):

Յեզնանքը շարքում ընթանում է բնական գրողը հաջող ընտրված բառով դիմակագերծում է այս հերոսներին՝ ցուցադրելով նրանց արատները: Շարքի վերնագիրն իսկ («Հեղափոխության մակարույժները») ընդհանուր գաղափար է տալիս հերոսների՝ մակարույժ-հեղափոխականների մասին: Իսկ արդեն շարադրանքում Օսյանն անում է հաջորդ քայլը. **հեղափոխական** բարի փոխարեն հաճախ միտումնավոր գործածում է **մակարույժ** բառը և, հակառակը, **մակարույժ** բարի փոխարեն՝ **հեղափոխական-ը**: Օրինակ՝ «Տգետ, ամիսելք, ...երկչոտ մարդ մը..., որ իր ոչնչության գիտակցությունն ունի և որ սակայն կ'ուզե հանրային դեր մը խաղալ, թերթ հրատարակել, կուսակցություն կազմել, հրամանին տակ մասնաճյուղեր ունենալ... վերջապես մակարույժ մը, մեծկա՞կ մակարույժ մը ըլլալ» (396): Կամ՝ «...կարգ մը մակարույժներու համար ստակ հավաքած ատեննին բռնված հերոսներ...» (399): Ընդգծված բառերը հոմանիշներ չեն և այս համատեքստից դուրս չունեն առնչակցության որևէ եզր: Սակայն այս կիրառության մեջ, կրելով գրողի անհատական վերաբերմունքը, վերացվում են **խոսքային (անհատական) հոմանիշների**⁷: Գրողը ինաստային մերձություն, այս դեպքում՝ նույնություն է հաստատում իմաստով տարբեր բառերի արտահայտած հասկացությունների կամ հատկանիշների միջև: Այս ոճական հնարքով Օսյանը հավասարության նշան է դնում **հեղափոխական և մակարույժ** բառերի միջև՝ ստեղծելով իր ժամանակաշրջանին բնորոշ հեղափոխական «հերոսի» կերպարը:

Ընդհանրապես հնարավոր չէ որևէ սահմանափակում դնել գրողի կողմից ընտրված ոճական այս կամ այն միջոցի գործածության մեջ: Սակայն, պայմանավորված ստեղծագործության թեմայով, հերոսի կերպավորման առանձնահատկություններով, առանձնացվում են որոշ լեզվաոճական իրո-

⁶ Եր. Օսյան, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. I, Եր., 1960, էջ 399: Այսուհետև այս գրքից մեցքերումների հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում՝ նշելով միայն էջերը: Պահպանել ենք հրատարակության ուղղագրությունը:

⁷ Տե՛ս Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 70-71:

ղություններ, որոնց գործածությանը հեղինակը որոշակի նախապատվություն է տալիս: Այս առօլմով ուշագրավ է Օտյանի կողմից համեմատության տարատեսակ ձևերի կիրառումը երգիծատիպերի կերպավորման մեջ:

Այսպես, Կահիրեի հայկական սրճարաններից մեկում, ուր հավաքվում են հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, շուտով սկսվելու է հերթական «հերոսի» ևս մի «ձրի ներկայացում»: Նրանց համար «հերոսին» լսելն ընդամենը ժամանց է, քանի որ «Ալ իրենց համար **հերոս մը տեսակ մը ածպարար էր**, որ ձրի ներկայացումներ կու տար հայկական սրճարանին մեջ և երբ նոր հերոսի մը գալուստը իմանային, կ'ըսեին...» (402): Ակնհայտ է երգիծաբանի՝ իրողության հանդեպ ունեցած դառը հեգնանքը, որը կառուցվում է խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցների՝ **համեմատության և կրկնության համատեղ գործածությամբ**: Նախ՝ ընտրելով **նույնական համեմատությունը**, որը ստորոգման միջոցով հատկանիշը ամբողջությամբ է վերագրում համեմատվող առարկային կամ անձիմ⁸, երգիծաբանը նույնացնում է **հերոս և ածպարար** բառերի իմաստները: Ապա՝ մը անորոշ հոդի կրկնությամբ առավել ընդգծում է անվավեր հերոսի ասելիքի և քաղաքական անհասկանալի կողմնորոշման անորոշությունը: Այս միջոցով գրողը թերևս բացահայտում է քաղաքական կոնկրետ նպատակներ չունեցող «հերոսի»՝ Վարդիոգյանի կերպարը, որը, սակայն, իր ճառերով ածպարարի ազդեցություն թողնելով, օրվա դրամը պիտի վաստակի:

Սքողված համեմատության կիրառումը (համեմատության եզրերից մեկը բացահայտ չէ, սակայն համատեքստը հնարավորություն է տալիս ամբողջությամբ վերականգնելու համեմատյալը⁹) կատարելության է հասցնում կերպարի արտաքինի կոմիկական նկարագրությունը: Ահա Վարդիոգյանը՝ «...լայն ու երկայն ցցված ականջներով, խոշոր քիթով, հերկեն դարձող հոգնած եզի տարտամ նայվածքով, գլխուն զարկած մեկը ներկայացուցին մեզի...» (398): Յերոսի նկարագրությունը անմիջականորեն հիշեցնում է պարոնյանական հայտնի կերպարին՝ Արիսողոն աղային. «Այս ճամփորդն օժտված էր զույգ մը խոշոր և սև աչքերով, զույգ մը հաստ, սև և երկար հոճերով, զույգ մը մեծ ականջներով և զույգ մը քիթով... Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե պարոն Յ. Վարդովյան հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կ'ուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»»¹⁰:

Օտյանը իր հերոսներին և նրանց միջավայրը ներկայացնելիս հաճախ միասնաբար է գործածում ոճական մի շարք հնարքներ, որոնց միջոցով և՛ կերպարի, և՛ նրա միջավայրի կոմիկական նկարագրությունը դառնում է առավել ամբողջական ու կատարյալ:

Այսպես, հայտնվում է Վարդիոգյանը սպասված «հերոսական ներկայացմանը»: «Վարդիոգյան նստած էր սեղանի մը վերի կողմը, որուն չուրջն

⁸ Տես **Պ. Պողոսյան**, խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք II, Եր., 1991, էջ 13:

⁹ Տես նույն տեղը, էջ 18:

¹⁰ Յ. Պարոնյան, Ընտիր երկեր, գիրք 1, Եր., 1954, էջ 377:

ու վրան **հավաքված** էին ութ գավաթ **օղի**, **ժամկոչ** **մը**, **սիսեռի** **մեզե**, **ծխավաճառի** **աշկերտ** **մը**, ցնդած **բանաստեղծ** **մը**, խաշած **հավկիթ** **մը**, **քանի** **մը** **հատ** **ծիթապտուղ** ու **քանի** **մը** **հատ** **ալ** պարապ պտըտող **գաղթականներ**» (402-403): Թվում է՝ պարզ, բնականոն ընթանում է պատում, և գրողը տալիս է այն միջավայրի նկարագրությունը, որտեղ ծավալվելու է «ներկայացումը»: Երգիծաբանը սկզբում **ժամկոչ**, **բանաստեղծ**, **աշկերտ**, **գաղթականներ** անձնանիշ գոյականներին հավելում է **իրանիշ** գոյականներ՝ **օղի**, **սիսեռի** **մեզե**, **հավկիթ**, **ծիթապտուղ**: Ընդգծված գոյականներն անձնավորվում են կրկնասեռ՝ **հավաքվել** բայով, որը այստեղ գործածվում է չեզոք սեռի իմաստով: Եթե **հավաքվել** բայով անձնավորվում են իրանիշ գոյականները, ապա **քանի** **մը** **հատ** **ծիթապտուղ** ու **քանի** **մը** **հատ** **ալ** պարապ պտըտող **գաղթականներ** կապակցությունների մեջ **քանի** **մը** **հատ** որոշչի գործածությամբ **գաղթականներ** փոխանուն գոյականը կիրառվում է իրեն ոչ անձնանիշ (կամ իրանիշ) գոյական: Մարդկանց և ուստեղի փոխանիփոխ թվարկումնով ծևավորվում է կոմիկական նույնացում, հակադիր արժեքների կոմիկական համադրում (իրերն անգամ դառնում են «հերոսական ներկայացման» հանդիսատես): Այս միջոցով երգիծաբանը վեր է հանում մակարույժ-հեղափոխականի մի բնութագրիչ հատկանիշ ևս. Վարդիոգյանի համար կարևոր չէ, թե ինչ լսարանի առաջ է հանդես գալիս, գլխավորը օրվա ապրուստը հայթայթելն է:

Իր ժամանակի «հերոսներին» ներկայացնելիս գրողը տվյալ համատեքստում հեգնանքի ուժը մեծացնում է երբեմն մեկ բարի կրկնությամբ, ինչպես՝ «Հնչակ առած ժամանակնին, Հնչակ կարդացած ժամանակնին, Հնչակ տված ժամանակնին ձերբակալված **հերոսներ**, կարգ մը մակարույժ-ներու համար ստակ հավաքած ատեննին բռնված **հերոսներ**, խահվեի մը անկյունը քանի մը գավաթ օղիի ազդեցության տակ անօգուտ շաղակրատություն ընող **հերոսներ**, վլանգավոր թրեթ գրապաննին պտտցնող **հերոսներ**» (399): **Հերոսներ** բարի կրկնությամբ ծևավորվում է **հերոս-հակա-հերոս հակադրույթը**, և հեգնանքի այս ձևով գրողը հասնում է հերոսի այս տեսակի ժխտմանը:

Լեզվանական հնարքների համատեղ կիրառությամբ առանձնանում է «Հակահեղափոխականը» նորավեաի հերոսի կերպավորումը: Պ. Միսաքին ներկայացնելիս հեղինակը գրում է. «Բայի մը պես կ'եղանակավորվի ժամանակներու համեմատ, գոյականի մը պես կը հոլովվի, տեր-բային հետ համաձայն է՝ երբ տեր-բային վաճառական մըն է, միշտ ներկա ընդունելություն է, երբ դրամ տալու երթան իրեն և բացասական մասնիկ՝ երբ դրամ խնդրեն իրնե» (427): Քերականական տերմինների գործածությունը ինքնին զավեշտական է դարձնում հերոսի ընդհանուր վարքագծի բնութագրումը: Մեջ բերված օրինակում միասնաբար են գործածվում՝

1. **համեմատությունը՝ «քայի մը պես կ'եղանակավորվի ժամանակներու համեմատ, գոյականի մը պես կը հոլովվի».** պատկերավորման այս միջոցով բացահայտվում է ա. Միսաքի փոփոխամտությունը, հարմարվողականությունը, ստրկամտությունը և ստորաքարշ էությունը,

2. նույն բառի միաժամանակ երկու իմաստների ընդգծումը. «Ժամանակներու համեմատ» կապակցության մեջ ժամանակներու գոյականը գործածվում է երկու իմաստով՝ **տերմինային նշանակությամբ** (բայական ժամանակներ), **ոչ տերմինային նշանակությամբ** («ժամանակ» վերացական գոյական). այս կերպ ցուցադրվում է նրա համակերպվողությունը և անսկզբունքայնությունը ժամանակի հասարակական-քաղաքական փոփոխությունների նկատմամբ,

3. բառախաղը՝ «միշտ ներկա ընդունելություն է, երբ դրամ տալու երթան իրեն». «Ներկա ընդունելություն» տերմինը (սահմանական ներկա) այստեղ գործածվում է միշտ դրամ ընդունելու պատրաստ՝ ներկա լինելու իմաստով, որի միջոցով ընդգծվում է հերոսի դրամապաշտությունը,

4. փոխաբերությունը՝ «բացասական մասմիկ՝ երբ դրամ խնդրեն իրմե». այսինքն՝ մշտապես մերժում է:

Այս առումով տեղին է գրականագետ Ս. Մուրադյանի դիտարկումը. «Յերոսի և միջավայրի, նրա խոսքի և գործի հակասության բացահայտումով, հերոսի իրական էությունը մերկացնելու, դիմակազերծելու արվեստով Օտյանը բարձրանում է զավեշտագրության միակողմանիությունից, կիրառում երգիծանքի ավելի բարդ ու նույր ձևեր, ծաղրալից հեզնանքը դարձնում սպանիչ բնութագիր»¹¹: Յերոսի նման կերպավորումը հայ երգիծաբանության մեջ դիմանկարի կերտման բացառիկ նմուշներից է:

Օտյանը քայլ առ քայլ զարգացնում է պ. Միսաքի բնութագրումը և ոճական տարբեր հնարքներով անբողջացնում երգիծատիպի կերտումը: Ներկայացնելով պ. Միսաքին, «որուն համար ամեն հարուստ՝ «պերճաշուք իշխան» ու «անզուգական բարերար» կամ «մարդասեր» մըն է...» (427-428)` հեղինակը գրում է. «Այդ շուկայի սրամտության պ. Միսաք կ'ընկերացնե ապուշ, անարտահայտիչ ծիծաղ մը, զոր հարուստներու քով «իի՛, իի՛, իի՛» ձևով կ'արտաբերէ և ծանոթներուն քով «հա՛, հա՛, հա՛»» (429): Թեև ձայնարկությունները իմաստից գուրկ բառեր են, և նրանց ոճական արժեքը խոսողի հույզերն ու ապրումներն արտահայտելն է, սակայն մեջ բերված օրինակում դրանք խոսքին հուզական երանգ չեն տալիս: Ընդգծված ձայնարկությունների գործածությամբ ձևավորվել է խիստ սակավ հանդիպող **համատեքստային հակադրույթ**: Յի՛, իի՛, իի՛ ձայնարկությունը շեշտում է պ. Միսաքի քննող և հաճոյացող էությունը, իսկ **հա՛, հա՛, հա՛-ն՝** նրա գրեհիկությունը, անշնորհք վարքագիծը:

«...ինձի նպատակ ընտրած եմ միշտ... **անհածո ըլլալ**.- գրել է Օտյանը: - Անհածո ըլլալ օճառի պղպջակներէ շինված ազնվաշութերու, ...ունայնության վրա կառուցված արժանիքներու» (564): «Յեղափոխության մակաբույծները» շարքի կերպարներից յուրաքանչյուրը «օճառի պղպջակներէ շինված համբավներ»-ից մեկն է, և նրանցից յուրաքանչյուրի ներկայացման ժամանակ որոշակիորեն փոխվում են հեզնանքի արտահայտման լեզվական միջոցները: «Արտասահմանի գործիչը» նորավեպի հերոսը՝ Կակայանցը, կովկասի է՝ «**ջրվեժացյալ** մորուքով, **գիսախոհիվ**

¹¹ Ս. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 128:

մազերով, լայնեղոր գլխարկով թուխս երիտասարդ մը սևազգեստ ու ձեռքը հաստ գավազան մը բօնած» (386): Ընդգծված բառերը պատկանում են բարձր ոճի բառաշերտին և նպաստում են Կակայանցի ներկայանալի արտաքինի նկարագրությանը, ընդ որում, «**ջրվեժացյալ մորուքով»** կապակցության մեջ որոշիչ-մակրիոր արտահայտված է գրաբարյան անցյալ դերբայով, որը, թվում է, ավելի ազդեցիկ է դարձնում հերոսի արտաքինի նկարագրությունը: Բայց հաջորդ տողում երգիծաբանը միանգամից չեզոքացնում է այս տպավորությունը. «Այդ մարդոց մազն ու մորուքը երբեք չեն զգացած մկրատի շփումը, և եթե ամեն մարդ կովկասից ծներ աշխարհի երեսը, սավիրիչները պիտի ստիպվեին հեղափոխական ըլլալ՝ ապրելու համար» (380): Չափազանցության՝ «**այդ մարդոց մազն ու մորուքը երբեք չեն զգացած մկրատի շփումը**» գործածությամբ Օտյանը ստեղծում է հերոսի արտաքինի կոմիկական նկարագիրը: Իսկ **հեղափոխական բառը**, կիրառելով **մակաբռոյժ**-ի փոխարեն, որի մասին արդեն խոսել ենք, հեգնանքի քողի տակ յուրօրինակ դատավճիր է կայացնում Կակայանցի և, ընդհանրապես, շարքի մյուս հեղափոխական գործիչների ինքնանպատակ գործունեության վերաբերյալ, իսկ Կակայանցի դիմանկարի կերտումը հասցնում կատարելության: Յերոսի ներքին էության բացահայտմանը հեգնական մեծ լիցք է հաղորդում նրա իսկ խոսքում **քերականական սխալ ձևերի կիրառումը**: Քերականական սխալները ձևավորվում են ձևաբանական և շարահյուսական այս կամ այն ձևի սխալ կազմությամբ, ինչպես՝ հեգնակի սխալ կազմություն, հոլովածկի սխալ կիրառություն, բայածկի անճշտ կազմություն և այլն, կամ քերականական ճիշտ ձևի ոչ ճիշտ կիրառությամբ, ինչպես՝ գործիական հոլովի փոխարեն բացառականի գործածություն, բայական ժամանակաձևերի շփոթ և այլն: Այսպես, Կակայանցը, սերտելով մի շարք «**հեղափոխաշունչ**» բառեր, ճառում է անսպառ եռանդով: Նրա խոսքը հեղինակը կառուցում է քերականական սխալների առատ գործածությամբ: Օրինակ՝ «**Այժմ ժամանակը հասել է գործելու. պետք չեր կորցնել ոչ մի րոպե**» (386), «**Յերն եմ անիծել այն րումաթիզմային, որ զիս գամել է այստեղ, առանց դորան ես այս րոպեին պետք էր լինեի Մասիսի գագաթում**» (386-387), կամ՝ «**Այդ երիտասարդը մի այնպիսի հերոս է, որի նման եթե մի քիչ ավելի գտնվեր մեր ազգում, փրկության գործը տարբեր հանգամանք էր առնում**» (ն. տ.): Նկատելի է, որ հերոսի խոսքը կառուցված է արևելահայերենի (հասել է, գամել է, մի, առնում էր, գագաթում, պիտի ասեմ, մեր ազգում և այլն) և արևմտահայերենի (պահ մը, զիս, պետք է շարժիլ, հույնին ու թյուրքին մեջ և այլն) լեզվատարբերով, որոնցում առկա են քերականական սխալներ: Գրողը հատուկ նպատակադրումով տեղի պարագան արտահայտում է ներգոյական հոլովով՝ **գագաթում**, որի կիրառումը, սակայն, այս համատեքստում **քերականորեն սխալ է**: Այս դեպքում ճիշտ կլիներ տրական հոլովի գործածությունը, քանի որ տրական հոլովով դրված տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման կոնկրետ տեղը, իսկ ներգոյական հոլովով դրված տեղի պարագան՝ այն տեղը, որի ներսում է կատարվում ենթակայի գործողությունը: Քերականորեն սխալ է նաև բայական ընդգծված

ժամանակածերի (բայական կերպերի) մեկտեղումը: Սա, իհարկե, գրողի՝ երկու գրականների լեզվական իրողությունների չիմացության կամ շփոթության արդյունք չէ, այլ ունի որոշակի նպատակ: Յայրենիքից հեռու գործող յուրաքանչյուր մակարուց-հեղափոխականի կարծիքով, առավել ազդեցիկ ու հավատ ներշնչող էին կովկասյան արտաքինն ու լեզուն: Այս դատողությունը թերևս առավել ամրապնդվում է «Նախկին գործիչը» նորավեպի հերոսի՝ Կարպիսի բնութագրությամբ: «Կարպիս ուզած էր պատրաստ գտնվիլ ամեն պատահականության հանդեպ և ասոր համար պատշաճ դատած էր հեղափոխականի գույն մը տալ իր խոսքերուն, մորութին ու գավազանին: Խոսքերը կովկասյան հոլովումներ առած էին...» (407): Եվ քանի որ թե՛ Կակայանցը, թե՛ մյուս երգիծատիպերը թերուս ճամարտակողներ են, ուստի հեղինակը հեգնում է կերպարներին՝ նրանց խոսքը կառուցելով երկու գրականների լեզվախսանությունը ու քերականական սխալներով:

Օսյանը հաճախ է օգտվում հեգնանքի ձևավորման այս միջոցից: Նույնիսկ նորավեպերից մեկի վերնագիրն է կառուցված նշված միջոցով՝ «Որ մենք հերոս...», իսկ հերոսին՝ Վարդիհոգյանին կերպավորելիս երգիծաբանը հաջողությամբ դարձյալ օգտվում է ոճական այս հնարքից, ինչպես՝ «Որ մենք հերոս, պետք է տեսնենք, քննենք և ուսումնասիրենք ամեն բան մեր աչքով» (401), «Ուրեմն որ մենք հերոս, պետք է երթանք Ալեքսանդրիա» (404), «Որ մենք հերոս, պետք է երթանք նաև մեր ռուսական կեղծը ընկերներու նոտ» (405), «Պետք է երթանք Եվրոպա... և տեսակցինք բարձրաստիճան անձերու հետ մեր ազգային փրկության մասին» (ն. տ.):

Հետաքրքրական է այն իրողությունը, որ գրողը երթեմն քերականական ոչ ծիշտ կառույցներ է գործածում իր հեղինակային խոսքում: Սա պատահական չէ, քանի որ նորավեպերում նա հանդես է գալիս որպես հեղինակ-հերոս: «Նախորդ երգիծական գործերի համեմատությամբ նկատվում է մի խոշոր նորություն. հեղինակը պատմողից վերածվում է գործողության անմիջական մասնակցի, և ինքն է իր հարցապնդումներով բացահայտում հերոսին»¹²:

Ներկայացնելով «լեզվաբանական նրբություններով միտքը խճողած» պ. Միսաքին՝ երգիծաբանը գրում է. «Նախկին վարժապետ մըն է պ. Միսաք, որ Եվրոպա կ'ապրի իր նախկին աշակերտներու ծնողներուն, որոնք վաճառական են՝ ողորմությամբ» (426): Մեջ բերված օրինակում ակնհայտ է մտքի անհարթությունը: «Որոնք վաճառական են» որոշիչ երկրորդական նախադասության փոխարեն ծիշտ կլիներ վաճառական ծնողներուն որոշիչ-որոշյալ կապակցության գործածումը: Երգիծաբանը, սակայն, քերականական ոչ ծիշտ կառույցով իր հեղինակային խոսքով մոտենում է կերպարի խոսքին և հեգնում վարժապետի «խճողված» եռթյունը:

Այսպիսով, «Հեղափոխության մակարույժները» շարքի կերպարները թեև ննան են իրենց ներքին և արտաքին եռթյամբ, գործելու նպատակնե-

¹² Ա. Սուրառյան, նշվ. աշխ., էջ 128:

ոռվ, սակայն հեգնանքի արտահայտության ոճական տարրեր միջոցների գործածությամբ նրանցից յուրաքանչյուրը կերպավորվում է յուրովի, և ստեղծվում են եզակի երգիծատիպեր:

ЛИАНА САРКИСЯН – Ирония как средство характеристики героев в цикле рассказов Ерванда Отяна “Паразиты революции”. – В статье исследуются стилистические возможности иронии как одного из выразительных средств сатиры на примере цикла рассказов “Паразиты революции”, принадлежащего видному армянскому сатирику начала XX века Е. Отяну. Проанализированы, в частности, такие стилистические средства характеристики героев, как синонимы и антонимы, сравнения, олицетворения, повторы, неправильные грамматические формы и т. д.

LIANA SARGSYAN – Irony as a Means of Hero Depiction in the Cycle of Stories “Revolution Parasites” by Yervand Otyan. – The present paper seeks to study stylistic devices of expressing irony in the cycle of stories “Revolution Parasites” by the outstanding 20th-century Armenian satirist Yervand Otyan. The study reveals such stylistic tropes, as synonyms and antonyms, personification, reprise, grammatically inaccurate structures through which Otyan portrays his heroes.